

Թեմայի վերնագիրը՝	Տեխնոլոգիական պրոցեսների մշակումը արագացուցչային տեխնիկայի ճշգրիտ հանգույցներ պատրաստելու համար
Կազմակերպության անվանումը՝	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
Թեմայի ղեկավարը՝	Ավագյան Վարդան Շավարշի

AREAL ճշգրիտ գծային արագացուցիչի նախագծի իրականացման ժամանակ CANDLE ինստիտուտում նախագծվել և պատրաստվել են մի շարք հանգույցներ և ռադիո ֆիզիկական սարքավորումներ՝

- մագնիսական սխեմաներ,
- ճշգրիտ կարգավորվող հարմարանքներ,
- գերբարձր վակուումային համակարգ, վակուումային խցիկ,
- բարձր ճշտություն ունեցող հովացման համակարգեր,
- բարձր հաճախականության համակարգի հանգույցներ և այլն:

Անհրաժեշտություն առաջացավ վերը նշված տեխնոլոգիական պրոցեսներից բացի մշակել մետաղակերամիկական միացման տեխնոլոգիա, որը լայն կիրառություն ունի ժամանակակից գիտությունում և տեխնիկայում, հատկապես՝ էլեկտրոնային տեխնիկայում, արագացուցչային, ատոմային և քիմիական մեքենաշինություններում:

Մետաղակերամիկական հանգույցները պետք է ապահովեն բարձր մեխանիկական և էլեկտրական ամրություն, բարձր ջերմաստիճանում և տարբեր միջավայրերում ջերմակայունություն, վակուումային հերմետիկություն, քիմիական և ռադիոակտիվային կայունություն: